Նախագիծ 55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի <<բ>> պարբերությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեյի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 02 ծրագրի տնտեսագիտական դասակարգման <<Այլ ծախսեր>> 4861 հոդվածով նախատեսված 200,000.0 հազ. դրամ նախահաշվային արժեքով ծառայությունը ձեռք է բերում <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հարապարակման հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է ընտրական հանձնաժողովների աշխատանքների և ընտրական գործընթացների կազմակերպման համար նախատեսված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների անհատական կնիքների, դրոշմակնիքներ պատրաստման, ընտրական անհրաժեշտ փաստաթղթերի (արձանագրությունների ձևեր, գրանցամատյաններ, ծրարներ), քվեաթերթիկների տպագրական աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի <<բ>> մասի համաձայն, այն է՝ գնումներն իրականացնել բանակցային ընթացակարգով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն սահմանված են խիստ որոշակի ժամկետներ նշված աշխատանքների իրականացման համար:

Մասնավորապես Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջների համապատասխան լիազոր մարմինը (Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն) ընտրական տեղամասերը կազմավորում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ, ինչը նշանակում է, որ ընտրական տեղամասերի քանակը հայտնի է լինում միայն քվեարկության օրվանից 45 օր առաջ, իսկ առանց նշված տեղեկատվության կնիքների պատրաստամն աշխատանքներն անհնարին է սկսել:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների համապատասխան դրոշմակնքման համար հատկացվող հատուկ թանաքանյութը հնարավոր է ձեռք բերել միայն արտերկրից:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 57-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների համապատասխան քվեաթերթիկների տպագրությունը սկսվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 10 և ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ լիազոր մարմնի (Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի

և վիզաների վարչություն) ընտրողների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 10 օր առաջ տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Նման պայմաններում էական նշանակություն է ձեռք բերում այն սուբեկտների ընտրությունը որոնք պետք է իրականացնեն նշված աշխատանքների կատարումը, քանզի դրանց ձախողման դեպքում կվտանգվի ընտրություններ կազմակերպումն ու անցկացումը, քանի որ նշված աշխատանքները պետք է իրականացվեն ոչ միայն հստակ որոշված խիստ կարճ ժամկետներում, այլև պատշաճ որակի ապահովմամբ:

Ավելին հարկ է նկատել, որ նախատեսված աշխատանքների հիմնական մասը պետք է իրականացվի առաջիկա համապետական ընտրության նախապատրաստական աշխատանքների շրջանակներում և իրականացման ժամկետներում ներառվում են նաև բավականին շատ ոչ աշխատանքային օրեր, որով պայմանավորված առավել կարևորվում է աշխատանքների պատշաճ և ժամանակին իրականացումը: